

ԲԱԺԻՆ 8

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Մարդահամարի ծրագրով տեղեկություններ են հավաքագրվել բնակելի շինության հետևյալ տեսակների վերաբերյալ՝

- անհատական տուն
- անհատական տան մի մաս,
- առանձին բնակարան,
- ընդհանուր (կոմունալ) բնակարան,
- տնակ, ժամանակավոր կացարան,
- հանրակացարան
- համատեղ բնակության (ինստիտուցիոնալ) կազմակերպություն,
- այլ բնակելի շինություն

Ընդ որում 8.1-8.10 աղյուսակներում բնակելի շինության «Տիպային» սյունակում միավորված են «Անհատական տուն», «Անհատական տան մի մաս» և «Առանձին բնակարան» բնակելի շինության տեսակները:

«Անօթևան» համարվել են անձինք, ովքեր չունեն բնակության որոշակի տեղ, իրենց ոչ մեծ ունեցվածքը կրում են իրենց հետ և գիշերում են պատահական վայրերում (փողոցներ, մուտքեր, այգիներ, կիսաքանդ և լքված շինություններ և այլն):

Տնային տնտեսության բնակելի միավորի ընդհանուր մակերեսը որոշվել է բոլոր բնակելի սենյակների և օժանդակ շինությունների (խոհանոցներ, նախասենյակներ, լոգարաններ, մառաններ) մակերեսների հանրագումարով՝ ներառյալ կառուցված պահարանների, նախասրահների, ներբնակարանային միջանցքների մակերեսները:

Ընդհանուր մակերեսի մեջ չի մտցվել աստիճանավանդակների, նախամուտքերի, դուրս գցված կառուցվածքային տարրերի, առանձնացված ամառային խոհանոցների և այլնի մակերեսները:

Բնակելի մակերեսի մեջ մտցվել են տնային տնտեսության կողմից զբաղեցրած բնակելի բոլոր սենյակների մակերեսները՝ չհաշված ներկառուցված պահարանների մակերեսները: Սենյակի մի մասը զբաղեցնող տնային տնտեսության բնակելի մակերեսի մեջ մտցվել է միայն նրան բաժին ընկնող մասի մակերեսը:

Անօթևան տնային տնտեսությունները ներառված են միայն 8.1 աղյուսակում: